



ԿԱՊԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ /ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ/

PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF KAPAN

КАПАНСКИЙ ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

ՀՀ Սյունիքի մարզը, Կապան, Գ.Նժդեհի հեռ.09379-59-21 e-mail info_kapan@aarhus.am, kapan.aarhus@mail.ru

Կ N-001/14

<29_>_մայիս_2014

“ԱՏ-ՄԵՏԱԼՍ” ՍՊԸ գլխավոր տնօրեն

Ռ. Վ. Պրեսնովին

Կապանի Օրիուս կենտրոնի

Համակարգող Ա. Ավագյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պրեսնով,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրիուսի համաձայնագիրը և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի վիճակի մասին մարդկանց իրազեկության աստիճանի բարձրացումը, խնդրում եմ Ձեզ, Կապանի Օրիուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Մեղրասարի ոսկու հանքավայրի լեռնային աշխատանքների ու հանքարդյունահանման ձևի և կիրառվող մեթոդների,
2. Գործարանի տեխնոլոգիական գործընթացների,
3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ:

“Տեղեկատվության մատչելիության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում(բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30 օրյա ժամկետ/): Տեղեկատվության տրամադրմանը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին (“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով՝  Աշոտ Ավագյան

Կապանի Օրիուս կենտրոնի համակարգող